

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար արխիվացման ծառայությունների գնման մրցույթի հայտարարություն /հրապարակվել է 03.06.2013թ.**

«ՀՀ-ՏԿՆ-ՇՀԾՁԲ-11/12» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/12» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեով, N 505 սենյակ, մինչև 2013թ. հունիսի 12-ը, ժամը 10:00-ն:

Հայտերը կբացվեն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում, N 505 սենյակում, 2013թ. հունիսի 12-ին, ժամը 10:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/12 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:  
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր****«Հ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար արխիվացման  
ծառայությունների գնման  
N ՇՀՇՁԲ-11/12-**

ք. Երևան

«\_\_» «\_\_» 2013թ.

«Հ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և -----ն, ի դեմս -----ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Վ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ա Ն Ժ Ա Մ Կ Ե Տ Ը**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

**2. Կ Ո Ղ Մ Ե Ր Ի Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ը Ե Վ Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը****2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին;

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

## **2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Բացառությամբ, երբ ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար տվյալ ժամանակահատվածում նախատեսված դրամական միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և գործում է մինչև 2013թ-ի դեկտեմբերի 25-ը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի,

բ) սույն Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն Պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը և (կամ) վնասն են:

Սույն Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները, և դրանցից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքերում վեճերը լուծվում են ՀՀ դատական կարգով:

7.6 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1,2,3,4 հավելվածները, բաղկացած 4 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր.  
Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003168  
ՀՎՀՀ 02578338

**ԿԱՏԱՐՈՂ**

«-----» ՍՊԸ  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

**Տնօրեն**

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ

(ստորագրություն)  
Կ.Տ

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Արխիվացման է ենթակա ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2005-2008 թվականների փաստաթղթերը:

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	<p><b>Արխիվացման ծառայություններ</b></p> <p><i>(Արխիվացման է ենթակա ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2005-2008 թվականների փաստաթղթերը)</i></p>	<p><b>Մշտական պահպանության գործերի արխիվացման ծառայության</b> Մշտական պահպանության գործերի առանձնացում և ձևավորում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման միջոցով պետության և հասարակության համար պատմամշակութային կամ գիտական արժեք ներկայացնող փաստաթղթերի առանձնացում համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշմամբ հաստատված ‘Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի’: Որոշակի հատկնիշների (ժամանակագրական, առարկայական, աշխարհագրական, հարցատրամաբանական) հիման վրա առանձնացված փաստաթղթերի դասակարգում գործերի շապիկների մեջ՝ այնուհետև թերթերի համարակալում, կարում և վավերացում սահմանված ձևով.</li> <li>- արդեն պատրաստի մշտական պահպանության արխիվային գործերի շապիկների նկարագրում ու ցուցակագրում:</li> </ul> <p><b>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:</b> ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշման համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքները համարվում են ավարտված մշտական պահպանության գործերի ցուցակը Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո:</p> <p><b>Անձնակազմին վերաբերող գործերի արխիվացման ծառայություն</b> Անձնակազմին վերաբերվող գործերի առանձնացում և ձևավորում (պահպանության ժամկետը՝ 25-ից 50 տարի՝ սկսած փաստաթղթերի ստեղծման հաջորդ տարվա հունվարի 1-ից)</p> <ul style="list-style-type: none"> <li>- Գործատուի հետ քաղաքացիների աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի և աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի ժամանակագրական կարգով դասակարգում գործերի շապիկների մեջ՝</li> </ul>

		<p>այնուհետև թերթերի համարակալում, կարում և վավերացում սահմանված ձևով.</p> <p>- արդեն պատրաստի անձնակազմին վերաբերող գործերի շապիկների նկարագրում և ցուցակագրում:</p> <p>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշման համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքները համարվում են ավարտված անձնակազմին վերաբերող գործերի ցուցակը Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովի կողմից հավանություն տրվելուց հետո:</p>
		<p><b>Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի արխիվացման ծառայություն</b></p> <p>Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի ըստ տեսակների և տարիների խմբավորում, կապոցավորում և սահմանված ձևի ակտի կազմում: Ակտի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 932-Ն որոշմամբ.</p> <p>Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ չմտնող փաստաթղթերի պահպանության ժամկետները սահմանված են ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշմամբ:</p>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր.  
Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003168  
ՀՎՀՀ 02578338

**ԿԱՏԱՐՈՂ**

«-----» ՍՊԸ  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

**Տնօրեն**

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Հավաքածին	Անվանումը	Միավորի գինը	2-րդ եռամսյակ		Ընդամենը	
			քանակ	գին	քանակ	գին
1	Արխիվացման ծառայություններ		2005-2008 թվականներ		2005-2008 թվականներ	
Ընդամենը՝						

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր.  
Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003168  
ՀՎՀՀ 02578338

**ԿԱՏԱՐՈՂ**

«-----» ՍՊԸ  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Տնօրեն**

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ



**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Հախարածին	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	2-րդ կիսամյակ		Ընդամենը	
				քանակ	գին	քանակ	գին
1	Արխիվացման ծառայություններ			2005-2008 թվականներ	100%	2005-2008 թվականներ	100%
Ընդամենը՝							

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003168  
ՀՎՀՀ 02578338

**ԿԱՏԱՐՈՂ**

«-----» ՍՊԸ  
Հասցե -----  
«-----բանկ» --Ը  
Հ/Հ -----  
ՀՎՀՀ -----

**Աշխատակազմի ղեկավար**

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Տնօրեն**

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի կառավարման նախարարություն  
ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2  
ՀՎՀՀ 02578338  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԴԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ  
ք. Երևան Մաշտոցի 9/24  
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ  
Տիգրան Մեծ մ/6  
Հ/Հ 2474900025703312  
ՀՎՀՀ 02547534

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N \_\_\_**

**ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«----» ----- 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ ----- գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը «\_\_» «\_\_» 2013թ.

Պայմանագրի համարը՝ № -----

Պատվիրատուն, ի դեմս \_\_\_\_\_ և Կատարողն՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «\_\_\_» «\_\_\_\_\_» 2013թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N\_\_\_ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «\_\_\_» «\_\_\_\_\_» 2013թ-ից «\_\_\_» «\_\_\_\_\_» 2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունը

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
<i>Արխիվացման ծառայություններ</i>				
Ընդամենը	-----	-----		-----

Վերոհիշյալ Ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքն ընդունեց

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

(ստորագրություն)

(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_

ազգանուն \_\_\_\_\_